

մի հարց ևս առաջարկել պ. Պերճին, թէ արդեօք թեմական վերադասարանը պարտադրանք է լաւ ուսումնասիրած լինել մանկավարժութիւնը, դպրոցը, նրա կոչումը և պարտականութիւնը: Իսկ պ. Պերճինը երբ և է եղել է մանկավարժ և որոշ յայտնի է իր մանկավարժական հմտութեամբ:

ՆԱՍՏԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս 18 հոկտ.

Հ. Բ. Բ. Խորհուրդը խոնարհաբար խնդրում է ձեռնարկել, խմբագիր տէր, իր ներկայ յայտարարութիւնը զետեղել «Մշակ»-ում որպէս լուր:

Հայոց Կովկասի Բարեգործական ընկերութեան Խորհուրդը ստացել է նուէր յոգուտ ընկերութեան. 1) մեծապատիւ պ. Աղէքսանդր Լազարեան թահիրանից յիտուն լուր, նրա յիսնամիայ ծառայութեան յօրեւանի առթիւ, և 2) պարոն Մնացական Սարգսեան Սարգսեանցի տանը, (մի հացկերպի ժամանակ) յանուն Ընկերութեան հանգանակած տան լուր, առ որ և հրապարակայէս մատուցանում է իր խորին չնորհախալութիւնը արդարեան նուիրատուններին:

Նախագահ Աղէքսանդր Անանեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«РУССКИЙ КУРЬЕРЪ», 1904-05 Կ. ՊՕԼՍԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Նորերում մենք լրագիրներին իմացանք, որ Ֆրանսիական կառավարութիւնը վճռեց հիմնել Միջին-արեւելեան ուսումնարան: Այդպիսի վճռի կարեւորութիւնը ակնյայտն է ամենի համար: Ֆրանսիան չէ բաւականանում նրանով, որ մի քանի ուսումնարաններ ունի Թիւրքիայում, այլ կամենում է այնտեղ աւելի ևս ամրացնել իր դրութիւնը: Եւ մենք շատ անգամ հարց ենք առաջարկում մեզ. թէ երբ, վերջապէս, Ռուսաստանը կը ցանկանայ ուսումնարան ունենալ Թիւրքիայում: Իւրաքանչիւր քայլափոխում մենք տեսնում ենք Կ. Պոլսում օտարազգիների գեղեցիկ ուսումնարաններ: Բացի Ֆրանսիական ուսումնարաններից, մինչև անգամ ամերիկացիները հիմնեցին իրանց Robert College (Բօքերտ Կոլէժ), որը բոլորակա-

նախապատրաստութիւն և շորերի ձևը կենդանի պատկեր էր գիտնական հրեաների:

—Այո, Մրօ աղա, ես վերջապէս հասայ իմ նըպատակին, որ ձեզ մօտ եմ ծառայելու. իմ կեանքս, գրիչս և լեզուս ձեզ է պատկանում, ինչպէս կամենաք այնպէս շարժեցէք, և, ի հարկէ, դուք էլ չէք խնայի ձեր ձախ գրպանը ձեր ծառայի օգտին պահելու:

—Այդ հնչող բան է, բայց դուք ճանապարհից եկած էք, քանք ձեր սենեակը ցոյց տամ, հանգրտացէ՛ք զի:

VI

—Կիրակոս քեանայ, ինչ անենք, այն անիծած կարօն ինձ վրա դառաւ: Ես քանի անգամ արեւելք եմ գնացել, որ մի հարկ եմ մտածել զորանց ազատելու: Մի քանի ժամանակ է արդէն մտածում էինք տեղիւնց թալանել տալու տէր-Գրիգորի տունը, այլ լաւ միջոց. թող գնան և այս գիշեր թալանեն և մի քանի չնչին բաներ կարօնից տանը պահեն: Առաւօտը երբ մեզ յայտնեն գողութեան մասին, կը գնանք և կը բանտարկենք կարօնի. Սողոմն էլ մեզ հետ, մեր գիտեցածի պէս կը կազմէ պրօթօկոլը: Հա, լաւ խելք է՛:

—Հիմախի է, հիմախի, այդ տեսակ խորամանկ դատողութիւն Կ. Պոլսի հայ-էֆէնդիներն էլ չունեն: Այնտեղ լինէիք գուցէ մեծ պաշտօն ստանայիք:

—Լա է, լաւ, թող այդ հանաքները: Կանչիր այստեղ Հասանին և Հիւսէյինին, որ հարկաւոր պատկերները տանք:

Կիրակոս-քեանայն դուրս գնաց, մի երկու րոպէից յետ ներս մտաւ Հասանի և Հիւսէյինի հետ

Հայոց և յունաց բաւականաչափ երիտաւարութեան համար տեսակցութեան տեղ է ծառայում: Այդ գեղեցիկ ուսումնարանը, որ բոլոր առարկաները աւանդում են անգլիական լեզուով, իսկապէս անգլիական շահերին է ծառայում: Եւստ կան նոյնպէս երկուսն անգլիական ուսումնարաններ: Աւելացրէ՛ք դրան և այն, որ անգլիական և ամերիկական միսիոնարները (քարոզիչները), տարածվելով բազմութեամբ ամբողջ Թիւրքիայում, տարածում են այնտեղի բոլոր անկեղծներում Անգլիայի լեզուն, գաղափարները և ազդեցութիւնը: Գերմանացիները, իտալացիները և աւստրիացիներն էլ Կ. Պոլսում ունեն մեծ կամ փոքր ուսումնարաններ: Ինչպէս երևում է, եւրօպացիների համար ուսումնարանը Թիւրքիայում դեպքանութեան բնական պատկանելիք է և յաւելում է համարվում:

Մենք մասնացոյց կանենք միայն մի քանի անյարմարութիւնների վրա, որոնք ծագում են Կ. Պոլսում ուսաց ուսումնարանի կատարելա բացակայութիւնից: Այստեղ կայ մի պատւաւոր ուսաց գաղթականութիւն, իսկ ո՛րտեղ և ո՛րպէս կարող են նրա անհամբեր ուսում տալ իրանց զաւակներին: Մանուկները, կատարելահասակ դասնալով, չը գիտեն ոչ իրանց ազգային պատմութիւնը, ոչ էլ զբաղանքութիւնը: Եւ այդ բանը տեղի ունի Կ. Պոլսում:

Ռուսաց ուսումնարանի բացակայութիւնը քննարկում է նոյնպէս ուսաց առեւտրի և արդիւնաբերութեան շահերին: Որովհետեւ տեղացիների մէջ ոչ ոք չը գիտէ ուսաց լեզուն, ուրեմն Կ. Պոլսի առեւտրական աշխարհը չէ կարող առեւտրական ընդարձակ կապեր հաստատել Ռուսաստանի հետ: Մենք ստիպված ենք բաւականանալ ստանալով միայն այն, ինչ որ դժուարութեամբ կարելի է ստանալ ուրիշ տեղերից, այն է եգիպտացի և խաւիարով: Ռուսաց արդիւնաբերութեան առարկաների մասին խօսել էլ չարժէ: Այն ինչ, աչքի առաջ ունենում այն յարմարութիւնները, որ ներկայացնում են ուսաց նաւահանգիստները Սև ծովում, Կ. Պոլսը շատ բան կարող էր ստանալ Ռուսաստանից: Բայց այստեղ կատարել-

աբար մի քանի փոքր խորհրդաւոր խօսակցութիւնից յետ միմեանցից բաժանվեցան:

VII

Հետեւալ առաւօտը ամբողջ Մ. Գիւղը խառնված և խռով խումբ հաւաքված խօսում էին մի սրբապիղծ գողութեան մասին:—Առաջակները գիշերով մտել էին տէր-Գրիգորի տունը, նրա ընտանիքը յափշտակել և տարել էին մի արծաթապատ աւետարան, երկու ոսկեգօծ խաչեր, սը. կարապետի մատուցը և մի սկիւր: Գիւղականները չէին արդարեւ տէր-հօր ոսկիները, այլ սրբազան զարդերն էին ափսոսում և դրանց գուշակում էին, որ գիւղին մի պատուհաս կը գայ:

Տանուէր Մրօն, օգնական Կիրակոսը, գրադիր Սողոմը, տէր-Գրիգորը եւսառնունքով և մի քանի գիւղի առաջնորդ մարդկանցով գիտում էին դէպի կարօնից տունը, որովհետեւ Մրօի ազնեաները գիւղի մէջ տարածել էին, թէ գողը կարօն է: Նաղուրն կանգնած էր դրանք և դարմանում էր, թէ ինչ է պատճառը, որ իր մարդու մահից յետոյ գիւղի համբանները արժան համարեցին իր տունն այցելելու: Նաղուրն այնպէս էր կեղծաբանափոխվել, որ մի քանի տարի սրանց առաջ նրան տեսնողը, այժմ կասէր, որ դա այն գեղեցիկ Նաղուրն է, այլ դա մի տղեղ և ամենակերպի մուրացկան ծեր կին է:

—Այս ինչպէս եղաւ, որ ինձ բաղաւորեցիս էք ձեր այցելութիւնով, մանաւանդ դուք, տանուէր Մրօ:

—Այո, քեզ համար մեծ բաղաւորութիւն է այսօրվայ մեր գալուստը, վերջը կիմանաս: Հանապա՛ս տուր մեզ խաղաղութեւ ձեր քիւնը ու պուճախները, պատասխանեց Մրօն:

Եւստ չեն ճանաչում Ռուսաստանը: Բացի Ռուսաց դեսպանութեան և հիւպատոսութեան մէջ ծառայող ռուսներին և ուս մի քանի նշանաւոր անձինքներից, ոչ ոք չէ ըստանում ուս լրագիրներ. մինչև անգամ «Սանկտ-Պետերբուրգ» անուանված օրձաւորներ չէ ստանում ուս լրագիր: Այդ բանի պատճառը Կ. Պոլսում ուսներն լեզուի չը գիտենալն է: Բայց ուսաց կօյնիւնից, հայերը մի քանի յոյներ և բոլոր պաւսանները, բոլորաբանները հիւս միասին, ուրախութեամբ կը տեսնեն ուսաց ուսումնարանի հիմնադրութիւնը: Այդ ցեղերին պատկանողները շատ գործնական մարդիկ են և շատ լաւ գիտեն, որ իրանց աւելի շատ գործ կունենան ուսների հետ, քան թէ որ և է ուրիշ ազգի հետ և ցանկանում են, որ իրանց զաւակները կրթութիւն ստանան ուս լեզուով: Բայց ի՞նչպէս հասնել այդ նպատակին: Եւ միթէ Ռուսաստանի համար կարելի է, որ երիտասարդութիւնը Թիւրքիայում, որ բաղկացած է բոլոր ցեղերից, հիմնաւորապէս զիտնայ ուսաց լեզուն և ճանաչէ Ռուսաստանը: Այն ևս կասենք, որ այնպիսի ուս երիտասարդների համար, որոնք պատրաստվում են զիպոմատիական կամ հիւպատոսական պաշտօնի համար, օգտաւէտ կը լինէր լրացուցիչ կրթութիւն ստանալ Կ. Պոլսում: Անգաղաւթ յարաբերութիւն ունենալով զանազան ազգութիւնների հետ, նրանք կարող էին աւելի շուտով ձեռք բերել լաւ տեղեկութիւններ: Անգլիացիները արդէն փորձեցին այդ սխառմը և յաջողութիւն ունեցան: Երիտասարդ անգլիացիներ զայիս են այստեղ կրթութիւն ստանալու անգլիական կառավարութեան հիմնած մասնադիտական ուսումնարանում: Այդ երիտասարդները յետոյ գնում են Թիւրքաց նահանգները որպէս անգլիական պաշտօնեաներ: Ներկայ ժամանակում անգլիացիները սակաւ առ սակաւ բաժանվում են լիվանացիներից և լաւ պաշտօնեաներ ունեն:

Գաղթականութիւնը ամենից առաջ ցանկանում է այդ ուսումնարանի հիմնադրութիւնը: Նորերում կօյնիւնի կողմից մի պատմաւորութիւն, պ. Սաբուրովի առաջնորդութեամբ, ներկայացաւ պ. դեսպանին և

—Ինչ խաղաղութիւն, ինչ բանի համար, ինչ թողի, որ որոնում ես:

—Հիմա կը տեսնես, կեղծաւոր կին, դու այդպէս ոչինչ չը գիտեցող ձևացիր, հեղուկութեամբ ասաց օգնական Կիրակոսը: Ամենքը մտնելով ընկան դէս ու դէն և գնալով արտուր ամենահեռաւոր անկիւնը, գիւղացի հետեղներին մինը բաւեց.—այ, ես գտայ մի կապոց, երեի նրա մէջ բաներ կան:

Ամենքը հետաքրքրութեամբ դիտում էին թէ ինչ է կապոցը բովանդակութիւնը: Կապոցից դուրս եկան զանազան շապիկներ, քահանայի մի անթարի և մի վերարկու, մի խաչ և զանազան մանր մանր իրեղէններ: Այս բոլորը տէր-Գրիգորը իր սեփականութիւն համարեց և յայտնեց, որ գողացած իրեղէնների մի մասը սա է:

Կարօն այս ժամանակ ներս մտնելով, ապշութեամբ դիտում էր իր հիւրերին և չը գիտէր ինչ ասէր: Նա քիչ ուշքի գալով մտաբերեց տէր-Գրիգորի գիշերվայ անցքը, բայց չը գիտէր թէ սրանց շորերը իր տանը ինչ էին չինում:

—Այ առաջակ, դու այստեղ ես, չես էլ ամաչում, դեռ համարձակվում ես այստեղ էլ կանգնել և իբրեւ միամիտ մտիկ տալ, ասեց տանուէր Մրօն:

—Ինչ է պատահել, այս ինչ բան է, ինչի էք այստեղ հաւաքվել, բացականչեց Կարօն:

—Տես, տես էս լրբին, գող—առաջակին տես, դեռ լեզու ունի խօսելու: Այ տղայք, կապեցէք սրա թիւերը և ցցեցէք բանտը. իսկ դու, պ. Սողոմ, այս տեսածներին մասին մի լաւ պրօթօկոլ չինիր. (ակնաջին) նրա մէջ գրիւ, որ Կարօն ինքըն խոստովանեց իր գողութիւնը: Սողոմը խիղճ

թախանձանքով խնդրում էր նրան ուշադրութիւն դարձնել այդ խնդրի վրա: Գաղթականութիւնը չը բաւականացաւ պատմական ցանկութիւն յայտնելով, այլ խոստացաւ նպաստել իր նուիրատուութիւններով ուսաց ուսումնարանի հիմնադրութեան գործին: Պ. Նիկիթով, որը ոչինչ ձեռքից բաց չէ թողնում, ինչոր կարող է ծառայել ուսաց շահերին, պատասխանեց պատգամաւորութեամբ, որ ինքն արդէն պարագլուխ է այդ գործով և լրջմտօրէն ուշադրութեան կաննի գաղթականութեան ցանկութիւնները:

Պ. դեսպանի թագաւոր Կայսրի թագաւորութիւնից վերադառնալու ժամանակ, դէպի նրան ուղղված շնորհաւորական ծառի մէջ, պ. Նիկիթովը խօսեց ուսումնարանի հիմնադրութեան մասին: Պ. Նիկիթով, Բուխարէրէից Բէրա զալով, կանչեց այնտեղ ուսաց գաղթականութեան նշանաւոր անձինքներից խօսելու նրանց հետ երկու նշանաւոր հարցերի ժամտախտի և ուսաց ուսումնարանի մասին: Բաղդաւորապէս, մենք ոչինչ չունենք խօսելու ժամտախտի մասին. իսկ ուսումնարանի վերաբերմամբ պ. դեսպանը յայտնեց գաղթականութեան ներկայացուցիչներին, որ ինքն մի յայտնի մանկավարժին յանձնել է ծրագրի կազմելը ուսաց ուսումնարանի համար Կ. Պոլսում: Ի հարկէ, գաղթականութեան ներկայացուցիչները շատ զոհ էին: Իսկապէս ուսումնարանի հիմնադրութեամբ հարկաւոր են միայն զբաղմունքի միջոցները, որ միշտ գայթակղութեան քար է այդ գործում: Գաղթականութեան նուիրատուութիւնները բաւական չեն կարող լինել և նա չէ կարող ուսումնարանի բոլոր ծախսերը հոգալ: Բայց կարելի է յուսալ, որ վերջը ուսումնարանը կը ծածկի իր ծախսերը ուսման համար աշակերտների տուած վճարով: Հիւպատոսութիւնների վրա յոյս դնել չէ կարելի, որովհետեւ նրանք հազիւ կարողանում են օգնութիւն հասցնել հիւանդանոցին: Ռուսումնարանի հիմնադրութեան հիւպատոսութեան գլխաւոր քարտուղար պ. Սուխոմինի idée fixe է դարձել և նրան յաջողեց համոզել մի հարուստ պլովնացու՝ ուսումնարանի համար անել այն, ինչ որ Սաբուրով

նստեց և կազմեց պրօթօկոլը և առանց ներկայ եղողների մօտ կարդալու, նրանց ստորագրել տվեց:

Հետեւեալ առաւօտը Կարօի ձեռները և ոտները չղթյալ մտնում էին Ս. քաղաքի բանտը: Մի քանի ամիսից յետ նահանգական դատարանը Կարօին հինգ տարի աքսոր վճռեց:

VIII

Մի երկու տարի էլ Մրօն, Կիրակոսը և Սողոմը իւրիւր մեջ լվլվալով իրանց բարբարոսութեան զազալանքովն էին հասել: Ժողովրդի բողոքը, լացը և յուսահատութեան հառաչները վերջապէս արձագանք էին գտել պաշտօնական բարձր շրջաններում:

Մ. Գիւղի վրա ամպերը խառնվել էին և սպասում էր տատիկ փոթորիկ: Սողոմը տեսնելով որ փոթորիկը լաւ ապագայ չէ խոստանում, մի օր իր փաստիւնէն հաւաքելով անյայտացաւ Մ. Գիւղից: Մնացել էին Մրօն և Կիրակոսը անելիք գործեան մէջ: Նրանք արդէն լսել էին, որ իրանց գեղծութեան վրա ընդհանրապէս չունեցող գալու է:

Վերջապէս եկաւ քննիչը և սկզբից կնքվով Մրօին և Կիրակոսի բոլոր գործերը, կայքերը և նրանց հեռացնելով պաշտօնից, սկսեց իր քննութիւնը: Փնտրելով այնպիսի առիւթներ գործից բացվեցան, որ քննիչի մազերը բիզ բիզ էին կանգնում: Խաղաղութիւն Մրօի տունը գտան մի գաղտնի դուռ, բայց անելով երեքսու մի ահազին ըստ տեսարան լիքն ամենայն տեսակ իրեղէններով ոսկեղէն և արծաթեղէն անօթներով: Այս բոլորը թէ Մ. Գիւղացիք և չըմակայի բնակիչները իրանց սեփականութիւն համարեցին, որոնք գողացվել էին մի քանի տարվայ ընթացքում:

Բաղրատ Պիճիկեանց

Հիւանդանոցի և գուսաց եկեղեցու
Համար: Սլափօնական ազգասէրը պատրաստ
էր միայնակ իրագործել պ. Սուխոփինի ե-
րազները, բայց մահը յանկարծակի յափշ-
տակեց նրան: Այժմ ի նկատի չը կայ այդ
սլափօնացու նման ոչ մէկ ազգասէր և այդ
պատճառով ակամայ հայացքները ուղղված
են ուսաց կառավարութեան և ուսու հա-
տարակութեան վրա: Շատ կարելի է մեզ կը
պատասխանեն. «Ռուսաստանը սեփական խիստ
շատ գործ ունի իր տանը, և ժամանակ չու-
նի զբաղվելու օտար մայրաքաղաքներով»:
Բայց նախ՝ Կ. Պոլսը ուսանելի համար այն-
պիսի մայրաքաղաք չէ, որպէս Փարիզ կամ
Լոնդոն: Ոչ ոքի համար զաղանթ չէ, որ
թիւթիւն գլխաւոր տեղն է բռնում Ռու-
սաստանի շահերում: Նայեցէք Անգլիայի
վրա, չը բաւականանալով նրանով, որ նա
հազար ու մի տեսակ միջոցներով լցրել է թիւ-
թիւն, նա մեծ ուշադրութեամբ դիտում է
այն բոլորը, ինչ որ կատարվում է մեր կող-
մից: Շատ ժամանակ չէ, որ անգլիական մի
քանի պետական մարդիկ և պատգամաւոր-
ներ մի մասնաժողով կազմեցին Լոնդոնում՝
թիւթեաց Հայաստանում կրթութիւն տարա-
ծող ընկերութիւններին օժանդակելու հա-
մար: Հարց է ծագում, թէ ի՞նչ նպատակ
ունի մի այդպիսի բարեգործութիւն անգ-
լիացիների կողմից: Որովհետեւ ուսաց հա-
մար, թիւթիւն «Մշակ» լրագրի ինքիատի-
վով բաւական նշանաւոր գումարներ էին
ուղարկում թիւթեաց Հայաստանի ուսումնա-
րանների համար, որոնց ղեկավարում են Կ.
Պոլսի հայոց ընկերութիւնները: Ռուսաց
հայերի նուիրատուութիւնները և «Մշակ»
լրագրի ազդեցութիւնը նպաստում էին, ի
հարկէ, ուսաց ազդեցութեան մեծացնելուն
թիւթեաց Հայաստանում: Այդ ազդեցութեա-
նը հարուած տալու համար անգլիացիները
շտապեցին օգնել հայկական ընկերութիւն-
ներին: Անգլիացիները նոյնպէս շատ գործ
ունեն տանը, բայց նրանք անուշադիր չեն
թողնում և այն, ինչոր կատարվում է ար-
ասասհմանում:

Սակայն Ռուսաստանը վաղուց է հասկա-
ցել ուսումնարանների միջոցով Կ. Պոլսում
ազդեցութիւն ունենալու անհրաժեշտու-
թիւնը: Վաղուց արդէն օժանդակութիւններ
են տրվում յունաց ուսումնարաններին Կ.
Պոլսում: Այժմ ժամանակները փոխվեցան և
այդ օժանդակութիւնները Ռուսաստանի հա-
մար բոլորովին աւելորդ ծախսեր են դար-
ձել: Զէ՛ր կարելի արդեօք խելայդ նպաստ-
ները յունաց ուսումնարաններին և յանձնել
նրանց ուսաց ուսումնարանին: Դրա մէջ
ոչինչ պախարակելի բան չը կայ, ընդհակա-
ռակն գովելի է: Կ. Պոլսի յոյները ոչ ոքի
կարողութիւն չունեն: Մենք կարծում
ենք, որ այդ սուբսիդիաները շատ մեծ չեն,
բայց մի փոքր գումար էլ աւելացնելով դրանց
վրա, կարելի էր նպաստել ուսումնարանի
հիմնելուն: Եթէ ուսաց հասարակութիւն-
ները իրանց կողմից կօգնեն ուսաց ղե-
կավարութեանը Կ. Պոլսում, այն ժամանակ
բուն Բերայի մէջտեղում մենք կը տեսնենք
մի ղեղեցիկ ուսումնարան, որի ազդեցու-
թիւնը ահագին կը լինի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՍԻ

— Փարիզի լրագրիւններից մէկը հրատարակեց
Ֆրանսիական արմատական կուսակցութեան մի
շրջաբերական, որի մէջ ասված է, թէ ոչ թէ միայն
հանրապետութիւնը, այլ և հայրենիքը վտանգի
մէջ է: Նրա մէջ, ի միջի այլոց, կայ հետեւեալ նա-
խադասութիւնը. «Ստորութեան և հասարակա-

կան հարստահարութեան կառավարութիւնը, այն
է Պրէսնիերի կառավարութիւնը պատրաստ է
մեզ կլանել: Այդ հիման վրա անհաշտները առա-
ջարկում են Օրլէանների զաղանթ ընկերութիւն-
ներին ղեկավարել հանրապետական խումբը: Իրանց
նախագծով անհաշտները պահանջում են, որ սահ-
մանադրական ազգային ժողով ընտրվի, պետութիւ-
նը բաժանվի եկեղեցուց, դատաստանական վերա-
նորոգութիւն մտցվի և երիտասարդները համար
պարտաւորեցուցիւ լինի զինուորական կրթութիւնը:

— «Standard» լրագրի Բերլինի թղթակիցը հա-
ղորդում է, որ Կ. Պոլսից Բերլին հասնելով,
Վ. Լոնդոնից փախչալ չէ հեղեղում, թէ ստվածներ նրան
առանձին յանձնարարութիւն է տուել: Մի քանի
օրից յետոյ նա ուղեորվում է Վիսթադէն թաղա-
ժառանգին ներկայանալու համար: Վերջը դերմա-
նական կայսրը նրան առանձին կընդունէ: Բերլին-
ից նա Փարիզ կը հասնի: Գերմանիայից ուղեոր-
վելուց առաջ նա կը խորհրդակցէ իշխան Բիսմար-
կի հետ:

— Բերլինից «Tems» լրագրին հեռագրում են,
որ այնտեղի լրագրիւններից շատերը «Nordd. Allg.
Zeitg». լրագրի յօդուածը Մուխտար-փաշայի
յանձնարարութեան մասին մի նախագիտութիւն
են համարում, որ ուղղված է Անգլիային, Ռուսա-
ստանին և մինչև անգամ Աւստրիային:

— Անհանգստացնող լուրերի հակառակ Պեշտի
«Lloyd» լրագրի պաշտօնապէս յայտնում է, որ
Բոսնիայի և Հերցեգովինայի մէջ երբեք այդպիսի
հանգստութիւն չէ եղել, ինչպէս այժմ, ուր զին-
ւորների հաւաքելը աջող կատարվեցաւ, որ այն-
տեղ ապստամբութեան ոչ մի դէպք չէ եղել և
որ մինչև անգամ սովորական աւաղակութիւննե-
րը այնտեղ սակաւ են պատահում:

— «Standard» լրագրի Վիեննայի թղթակիցը
երկրորդ անգամ տեսնվեցաւ Մուխտար-փաշայի
հետ Վիեննայի մէջ: Փաշան յայտնեց, որ նա
անհանգստացած է գործերի դրութեամբ Հայաս-
տանի մէջ, բայց թիւթեաց կառավարութիւնը մի-
ջոց չունի այնտեղ վերանորոգութիւնների մտքնե-
լու համար:

— Բերլինից «Times» լրագրին հաղորդում են,
որ իշխան Բիսմարկի հիւանդ է և որ նա բժշկի
խորհուրդով պլ ևս իրան չէ թող տալիս մտա-
ւոր աշխատանք: Կանցլերը դեռ էլի մի քանի ժա-
մանակ կը մնայ Ֆրիդրիխսթադտի մէջ:

— «Standard» լրագրի հաղորդում է, որ
պարլամենտական արձակուրդների ժամանակ կա-
ռավարութեան առաջին խորհուրդը նոյնների
3-ին կը կայանայ, որի ժամանակ կը քննվի
Նիցիտոսից անգլիական զորքերին յետ կանչելու
հարցը:

— «Post» լրագրի կարծիքով, Գաղստօնի մի-
նիստրութիւնը պարլամենտական պարագմունք-
ների սկզբին նշանաւոր փոփոխութիւնների կեն-
թարկվի:

— «Tems» լրագրի Հոմի թղթակիցը հաղոր-
դում է, որ վերջին ուխտադնացութիւնները դէպի
Վատիկան անբաւականութիւն պատճառեցին ազա-
տամիւններին: Նրանք վճռեցին, որ ան պատասխա-
նելու համար, այցելել Վիկտոր-Էմանուէլի դերեզ-
մանը այդ մեծ թաղաւորի մահուն օրը: Ասում
են, որ մօտ 50,000 հողի կը մասնակցեն այդ
ցոյցին: Միայն երաժիշտները 200 մինչև 700 հո-
գի կը լինեն: Մեծ քանակութեամբ դրօշակներ են
պատրաստում, որոնք հանդիսից յետոյ Հոմիքերտ
թաղաւորին կը ներկայացվեն: Դա միապետական-
ազատամիտ մի մեծ ցոյց կը լինի: Ներկայութիւն-
ը տոմսակիւնի գները 75% կէժամացնեն:
Կղերականները զանգաւում են, որ նրանցից
լրակատար գները չը վերցնեն, երբ նրանք պապին
տեսութեան կերթան:

— Կնչպէս լուր է տարածված, սպանիական
նոր մինիստրութիւնը ցանկանում է բարեկամա-
կան յարաբերութիւններ վերականգնել Սպանիայի
և Ֆրանսիայի մէջ: «Tems» լրագրի Մադրիդի
թղթակցի հաղորդութեան համեմատ Սպանիան
կամենում է առաջարկել Ֆրանսիային վերջ դնել
Ֆրանս-սպանիական անբաւականութեանը, միաժա-
մանակ երկու կողմից էլ չըջարեականներ հրատա-
րակելով այդ անհասկացողութեան մասին, ինչ-
պէս մի անգամ արվեցաւ Սպիդի գործի պատ-
ճառով:

— Պապական նուիրակը, մինիստրների հետ
խորհրդակցելու ժամանակ, ասեց որ կաթօղի

հոգեորականութիւնը դուք սաստիկ կընդդիմա-
դէք ազատամիտ վերանորոգութիւններին: Նա ա-
սեց նոյնպէս, որ քաղաքական ամուսնութեան
հարցը և ենթադրված վերանորոգութիւնները ու-
սումնարանական գործի մէջ ընդդիմադրութեան կը
հանդիպեն սուրը աթոռի կողմից: Մինիստրները
պատասխանեցին նուիրակին, որ, չը նայելով ի-
րանց յարգանքին դէպի պապը, կառավարութիւնը
կը կարողանայ հնազանդեցնել ժողովուրդին, թէ-
պէտ վերանորոգութիւնները անյապաղ չեն իրա-
գործվի:

— Կանտոնից հեռագրում են, որ Յիտիվայօ-
հնազանդութիւն յայտնեց անգլիական տեղապա-
մինիստրին և ներկայաւս Նատալի մէջ է գործն-
վում:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆՅՈՒՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 հոկտեմբերի: Հոկ-
տեմբերի 16-ին Փարիզի մէջ վախճանվե-
ցաւ պետական խորհուրդի անդամ Կոմս
Եւգենի Վատիկինից Պետետետին:

ԽԱՐԿՈՎ, 19 հոկտեմբերի: Երէկ բացվե-
ցաւ Ռուսաստանի հարաւի լեռնային ար-
դիւնաբերողների ութերորդ ժողովը:

ԿԱՄԵՆԵՑ-ՊՈԼՈՒՍԿ, 19 հոկտեմբերի: Ե-
րէկ այստեղ երկրաշարժ կար և լսվում էր
ստորերկրեայ ձայն:

ՖՐԱՆԿՖՈՒՐՏ (Մայնի վրա), 19 հոկտեմ-
բերի: Երէկ երեկոյան այստեղի պօլիցիա-
կան վարչութեան մէջ դինամիտի կամ
նիտրօ-գլիցերինի ձայնիւն պատահեցաւ:
Բոլոր ծառայողները անմիաժ մնացին, իսկ
շինութիւնը սաստիկ վնասվեցաւ: Կար-
ծում են, որ ձայնիւնը սօցիալիստներն են
գործել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 հոկտեմբերի: Լրա-
գրիւնները հաղորդում են, որ ներքին գոր-
ծերի մինիստրութեան մէջ վերջնականա-
պէս մշակված է և միւս մինիստրութիւն-
ների եղրակացութեան է յանձնված մի
օրինադիւն արեւմտեան 9 նահանգների աս-
տիճանաւորների դրութիւնը բարեփոխու-
ման: Բաղադրական գործերի պատճառով
արտասահմանում տարածված անհանգս-
տացնող լուրերի առիթով «Journal de St.
Petersbourg» լրագրիւնը ասում է, որ բոլ-
դարական հարցը անկասկած տեղական նը-
շանակութիւն ունի, բայց նա հետաքրք-
րում է եւրօպական կառավարութիւննե-
րին, Բալկանեան թերակղզու վրա այժմեան
կարգերը և հանգստութիւնը պահպանե-
լու նպատակով: Հենց այդ կողմից կառա-
վարութիւնների մէջ կատարեալ համաձայ-
նութիւն է աւրում և նրանցից ոչ մէկը չէ
ցանկանում դժուարութիւններ յարուցա-
նել, այլ ընդհակառակը ամենքը նրանցից
խուսափում են: Ներքե բերված հեռագրի-
ւրը Բերլինից համապատասխանում է այդ
զգացմունքին: Կաւեւայիններ, որ այդ զգաց-
մունքը բաժանում է և Ռուսաստանը, որ-
տեղ բացի այն, որ հետաքրքրված են Բոլ-
դարիայի կարգապահութեամբ և հանգըս-
տութեամբ, մի և նոյն ժամանակ համա-
կրում են իշխանութեանը, որ ստեղծված
է Ռուսաստանից և որի բարօրութիւնը
Ռուսաստանը առանձնապէս զնահատում է:

ԲԵՐԼԻՆ, 19 հոկտեմբերի: «Nordd. Allg.
Zeitg.» և «Post» կիսապաշտօնական լը-
րագրիւնների Վիեննայից ստացված լուրերը
վկայում են այն վատ տպաւորութիւնը,
որ գործել են այնտեղ վերջին անց-
քերը Սօֆիայի մէջ: Վիեննայի մէջ ամեն-
քը այն կարծիքի են, որ բոլդարական լը-
խանը բաւական հեռատես չէ և նա փո-
խանակ ձգտելու համաձայնութեանը Ռու-

սաստանի հետ, այնպիսի միջոցներ է դի-
մում, որոնք հեշտութեամբ կարող են
Ռուսաստանին մի համոզմունք ներշնչել,
թէ նրա հետ գոռող են վարվում: «Յան-
կալի է ասում են յիշեալ լրագրիւնե-
րը, որ բոլդարական իշխանը պլ ևս չը
հետեւէր այդ ընթացքին, որովհետեւ Բոլ-
դարիայի մէջ կատարված վերջին անցքե-
րը, որոնք Ռուսաստանի դէմ թշնամական
բնաւորութիւն ունեին, ոչ մի տեղ հաւա-
նութիւն չը գտան:

ՓԱՐԻԶ, 19 հոկտեմբերի: Պատասխանե-
լով Տօնկինի գործերին վերաբերեալ հար-
ցին, Ֆրանսիական արտաքին գործերի մի-
նիստը ասեց, որ Չինաստանը լրջութեամբ չէ
ձգտում համաձայնութեանը, ցանկանալով
ժամանակ վատասել և յուսալով Ֆրան-
սիական մինիստրութեան փոփոխութեան
վրա: Այդ պատճառով անհրաժեշտ է ե-
ռանդով և արագ գործել և այն ժամանակ
Չինաստանը ուրախութեամբ մի համա-
ձայնութիւն կը կայացնէ, որ կը համապա-
տասխանէ Ֆրանսիայի պատուին և շահե-
րին:

ՕՐԷՍՍՍ, 19 հոկտեմբերի: «Բօգօնակի»
կովկասեան շոգենաւային ընկերութիւնը, որ
դաշնադիր կապեց Կովկասեան երկաթու-
ղին ուղղակի Սեփաստօպօլի վրա ուսաց
երկաթուղիների հետ հաղորդակցելու հա-
մար, պատուիրեց Անգլիայի մէջ երեք նոր
շոգենաւեր, որոնցից իւրաքանչիւրը կարող է
բեռնել 80,000 պուդ: Շոգենաւերը դա-
րունքին պատրաստ կը լինեն:

ՆԻՃՆԻ—ՆՈՎՂՈՐՈՒ, 19 հոկտեմբերի: Շո-
գենաւային բոլոր ընկերութիւնները, բացի
«Սամօլեօ» ընկերութիւնից դարաբեցրին
բէխերը Վալդայից դէպի Օկա: Էգուց գնում
է վերջին շոգենաւը:

ԲՕՍՏՈՎ (Գօնի վրա), 19 հոկտեմբերի:
Այստեղ բացվեցաւ Ամօլօվի նոր և ընդար-
ձակ թատրօնը:

ՊՈԼՏԱՎԱ, 19 հոկտեմբերի: Արքեպիսկո-
պոս Եօնին կաթուած ստացաւ: Նրա առող-
ջութիւնը անյուսալի է:

ՖՐԱՆԿՖՈՒՐՏ (Մայնի վրա), 19 հոկտեմբե-
րի: Երէկվայ ձայնիւնից յետոյ պօլիցիական
շինութիւնը մաքրելու ժամանակ աւերակ-
ների մէջ գտնված են նիտրօ-գլիցերինով
լցված ուսումներ, քննութիւնը արագ է կա-
տարվում: Մի քանի անձինք կախաւոր-
ված են:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 հոկտեմբերի: Ներկայացման
ժամանակ այրվեցաւ այստեղի ցիրկը: Մար-
դիկ չեն վնասվել:

ԼՈՆԴՈՆ, 19 հոկտեմբերի: Երէկ երեկո-
յեան մայրաքաղաքի ստորերկրեայ երկաթու-
ղու երկու տեղերում ձայնիւններ պատա-
հեցան, որոնց ժամանակ 38 հոգի այլան-
դակվեցան: ձայնիւնները ֆենիկներին են վե-
րաբերում: Բոմբէլից հեռագրում են, որ
արդէն չորս օր է, որ իմամի եղբայրը պա-
շարել է Տասկատ քաղաքը: Անգլիական մի
նաւ ռմբակոծում է պաշարողներին: Քա-
ղաքի մէջ բնակվող անգլիացիները պաշա-
պանվել են նաւի վրա:

ՖՐԱՆԿՖՈՒՐՏ (Մայնի վրա), 19 հոկտեմ-
բերի: Պօլիցիական շինութեան մէջ պատա-
հած ձայնիւնի պատճառով կախաւորված
անձինք ապացուցին իրանց բացակայութիւնը
ձայնիւնի ժամանակ և իսկոյն արձակվեցան:

ԽՈՒՅԱՔԻՐ—Հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

„Ն Ո Ր - Դ Ր“

ԱՄԵՆՈՐԵԱՅ ԼՐԱԳՐԻ ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

գտնվում է ԲԱՐՈՆԱԿԱՅԱ ՓՈՂՈՑ, № 10 տանը, Ծուրխովի դեղատան կից—փոստատան հանդէպ: ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՅ Է ԱՄԵՆ ՕՐ, առաւօտեան 9-ից մինչև 7-ը: Օտարաբաղաբայցիք դիմում են՝ Редакция газеты „НОРЪ-ДАРЪ“, Тифлисъ.

1—3

ՎԻԵՆՆԱՅԻ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ՄԱՆԻ ԲԱԹՈՒՄ, ՏՈՒՆ ԹԱՅԻՐՈՎԻ

Մեծ քանակութեամբ ապրանքների պահեստ և վաճառատուն, ուր գտնվում են մեծ քանակութեամբ ամեն տեսակ կոշիկներ-ոտնամաններ, գուլպա-չուլքեր, հովանոցներ-զոնտիկներ, հագուստներ տղամարդի և կանանց, աղյուսներ-բաղդաղիք կովկասի ճաշակով, շապիկներ, ժամացոյցներ, ոսկի և արծաթէ: Ամեն տեսակ սպիտակեղէններ (շուշեղէն), որպէս են ստաքաններ, վագեր և այլն: Նոյնպէս և դանակներ, պատառաքաղներ-գդալներ, ֆրաժի ֆարիկից և հասարակ տեսակներից, կոճակներ, քաթանեղէն, զըլ-խարկներ և այլն և այլն ամեն ապրանքից գտնվում են մեծ քանակութեամբ շատ տեսակներով: Ծախվում են ֆարբիկի գնով և առանց աւելցուկի (без-запроса): Ընդունում է պատէրներ օտարաբայցիքից ամեն տեսակ ապրանքների:

Հասցէն БАТУМЪ, Мани, д. Таирова.

ՄԱՆԻ

ՖԱՐԱՄԻԱԿԱՆ ՇՈՒՆՆԱՐ

«Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ARMÉNIE (ԱՐՄԵՆԻԱ) որի նաւապետն է DUCHESNE (Գիւլշէն), հասաւ Փ Օ Թ Ի ուրբաթ օր 14-ին հոկտեմբերի, և Փ Օ Թ Ի Յ կը վերադառնայ չաբաթ օր, 22-ին հոկտեմբերի, դէպի Կ. Պ Օ Լ Ի Ս և ՄԱՐՍԵՒ, եթէ եղանակը բարեկաջող կը լինի:

Տեղեկութիւնները համար դիմել ընկերութեան ագէնտներին, Փ Օ Թ Ի Ս Կ. Պ Ա Ր Ա Ն Ի Օ-Ն Ի Ն, ԹԻՖԼԻՍՈՒՄ Կ. Ր Ը Ն Օ Ի Ն, Արժրոշու Գալէրէա № 194

7—9

Գուրս եկաւ մամուլի տակից վաղարշապատում տպագրված եփնիկ քահանայ երգիկանցի նոր աշխատասիրութիւնը՝ «Ձայնադրեալ ազգային երգարան»: Վաճառվում է Զ. Գրիգորեանցի կովկասեան զբաղմունքանոցում: Գինն է 80 կոպէկ: Մի և նոյն տեղը վաճառվում են նոյն հեղինակի հետեւեալ աշխատասիրութիւնները:

1. Մանկական երգարան առանց նոտաների 20 կոպ.
2. Մանկական ձայնագրեալ երգարան 40 կոպ.
3. Դասագիրք հայկ. ձայնագրութեան 30 կոպ.
4. Խմբական ձայնագրեալ երգարան 50 կոպ.

3—10

ԳԼՕԲՈՒՍԻ ԳՐԻՋՆԵՐ

Որոնցով կարելի է գրել ամենակալիտ թղթի վրա:

Միակ գործակա ԼԻԱԿԱՆ Խ տեղը կան ամեն թի համար մեծ ԳՐԻՋՆԵՐ էժան քան թէ նոյնպէս ԹԱՆԱԲ, ներ, գմուռ, ՄԱ ընչներ, պննար, ներ, ծխախոտի ՆԵՐ, ածելիք, աներ, ԲԱԶԿԱՌՈՒ-րարիւ կախելու ՏԻՆԵՐ, անոտներ,



լուծիւն ԱՆԳ-ԱՆՈՒԹ: Նոյն տեսակ ձեռագրե-քանակութեամբ ամեն ձեռ 250/0 ուրիշ տեղ: Կան թուղթ, տետրակ-ՏԻՏՆԵՐ, քարեգ-ԳՐԶԱԿՈՒ, քսակ-ամաններ, ՄԱՐԱՏ-րոցներ, խալիչա-ՄԱՀԱԿԱՒ, վե-համար իրեր, ԳՕ-ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ,

բրդանախան մետաղի իրեր, ԼԱՊՏԵՐ-ՆԵՐ, գդալներ, ԲԱԺԱԿՆԵՐ, ջրամաններ, երես լուսնալու ամաններ, Ֆիլտրա, կրան-շվոցներ, այգու մկրատներ, շորի շէտակա-գլխի, երկաթէ թելերից, ձիւ համար: Մա-կենաօջներ: Բժշկական թուղթ վատերկրողե-տի համար և այլն և այլն:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ:

63—100

ՄԱՍՆԱՌՈՐ ՀԱՌԱՍԱՐՄԱՍԱՐ

Պ. Մ. ԼԷԲԵԴԻՆՍԿԻ

Տեղափոխվեց Սօլովիակայա փողոց, Սպան-դարանի տունը № 12, կալուածական բանկի դիմաց:

8—10 (2)

Կանանց ձմերային վերսւրհո՛ւներ, տղա-մարդկերանց ԳԼԽԱԿՆԵՐ և այլն ծախվում են էժան գներով: ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ, ԱՐԾՐՈՒՆՈՒ գալերէա:

2—12

ՍՍՍՅՎԱՍԷ մեծ քանակութեամբ փոստային թուղթ ԲԻՊՍԻ և այլ տեսակների, ծրարներով: Նոյնպէս և պողպատէ գրիչներ, կլէճկա, ՄԱ-ՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ սպիտակ մետաղից, տուրքաւոր ՍԱՊՈՆ, թէյ 1-ին հոնձի և այլն: Բոլորն էլ ծախվում են 250/0 էժան, քան թէ ուրիշ տեղ: Անգլիական խանութի մէջ: Նոյնպէս տղամարդկե-րանց մի քանի հագուստներ, զրապ, տրիկո և այլն մեծ գինով:

7—10

ԶՕՐԲԵՐԻՆ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ ՀԱՍՑՆՈՂ ԹԻՖԼԻՍԻ ԱՐ-ՀԵՍՏԱՆՈՑԸ, որ գտնվում է Նաւ-թուխի մէջ, հրաւիրում է աշխատե-լու ԴԵՐԶԱԿՆԵՐԻՆ և ԴԵՐ-ԶԱԿՈՒՀԻՆԵՐԻՆ, որոնք ԶԵՌ-ԲՈՎ կարող են կարել համազգեստ-ներ և զինուորական շինեղներ, նոյնպէս և ոտքի ԿԱՐԵՄԲԵՆԱՅԻ վրա աշխատել ԳԻՏԱՑՈՂ գերձակներին և գերձակահիւներին:

9—10

Գիւղատնտեսական մեքենաների մասնագէտ

ԼԵԻՈՆ ԽԱՆ-ԱՂԵԱՆՑԻ

Ի ՎԱՂԱՐՇԱՊՈՍ

Բերել եմ տալիս և սարքում եմ գութաններ, ցանելու, հնձելու, կաշելու և զարման շինելու մեքենաները, շոգեշարժ ջաղացներ և ձիթահաններ, հա-նում եմ առուներ և սարքում եմ զանազան տեսակ ջուր բարձրացնող մեքենա-ներ: Զը գիտեցողներին սովորեցնում եմ նոյա բանեցնելու կերպը:

Պատկերազարդ ցուցակ մեքենաների ուղարկում եմ ցանկացողներին ձրի: Գիմել այս հասցէով ВЪ Вагарапатъ, въ контору Эчмиадзинской Па-ровой Маслобойни.

Л. Е. Ханъ-Агову.

5—6

ՍՍԱՄՈՒՍԱՅԻՆ ՑԱԽԵՐԸ

ՊԵՊՍԻՆԵԱՆ ԳԻՆԻ ԲՈՒԴՕ

Այդ գինին շատ գութեկան հաւ ունի, 25 տարի շարունակ գործ է ած-վում հետեւեալ դիպիւմներում: ԱՆԼԻԿԻ ԲԱՅԱԿԱՑՈՒԹԵԱ, ՍՍԱՄՈՒՍԱՅԻ ՑԱԽԵՐԻ և առհասարակ ԼԵԿԼԵՅ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱ ժամանակ:

Պէպսին «Բուդօ» ճանաչված է փարիզի բժշկական Ակադեմիայից և արժա-նացաւ առաջին մեդալների ֆուրի Զի աշխարհահանդիսում 1867 թ. ՎԻԵՆԱՅԻ 1873 թ. ՖԻԼԱԴԷԼՖԱՅԻ 1876 թ. և ՓԱՐԻՅԻ 1878 թ.:

Paris: Hottot—Boudault, 7, Avenue Victoria.

Գլխաւոր պահեստը ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Բարձրագոյն հաստատված կովկասեան ըն-կերութեան գեղատես ապրանքների վաճառման:

Գէպօ Շահ-Պարոնեանցի, Գրիգորակի և այլ գեղատեսներով:

Վերականգնեցող ՄԱԿ-ՄԱՍ ՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց ԲՆԱԿԱՆ ԳՈՑՆԸ վերադար-ձնող: Գինը 2 ռ. շիշը, ՓՈՍՍԱ-ՅՈՎ ուղարկված 2 ռ. 49 կոպ. ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ



Մի և նոյն տեղը ԽԻՆԱՅԻ ԻԽԼ, մազերը ամրացնելու հա-մար, 1 ռ. ամանը և վրձին գլխա-ցաւի դէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱ-ՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն: 66—100

Մ. Ն. ՏԻՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՊԱՀԵՍ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ

ԱՐՄԵՆԱՍԻ ԲԱԶԱՐ, ԿԱՏՈՒԹԵԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻՆՆԱՅԻ ԿԱՐԱՍԻՔ, զանազան աթոռներ 35 ռուբլոց գիւլիներ, բաղկա-թոռներ 6 ռ., գիւլիներ 12—25 ռ., կաշեղի, մանկական աթոռներ և այլն: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖԱՐԱՄԻԱԿԱՆ ՄԱՀԱԿԱՒՆԵՐ, ճանապարհի մահաւաններ, պա-հարաններ, ծալիոց սամովարներ: Զեմբլաններ 2 ռ. 75 կ.—26 ռ., սակի-յաժ ձեռքի և ուսից կախելու, ճանապարհի սովորական, ճԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿԼԵՐ 5 ռ. 50 կ.—30 ռ.:

Սամովարներ, խոհանոցի պղնձէ ամաններ, կօֆէյի, թէյամաններ, ութո-ներ և աղալու գործիք, գերմանական էմալով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՄԱՐ-ՄԱՐԻՕՆԻ ամաններ 4 ռ., երես լուսնալու պղնձէ և ժեստի ամաններ:

ՊԱՏԻ ՀԱՅԵԼԻՆԵՐ 9 ռ., առաւելտի հայելիներ 2 ռ. 40 կ.—13 ռ.: զանազան մետաղների մանակներ 1 ռ.—15 ռ., սկզբնի գդալներ 4 ռ. 50 կ. և թանգ, թէյի գդալներ ֆրաժիկ, մեխիօրի, լեհական և բրդանական արծաթից աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ, գանակներ, պատառաքաղներ 2 ռ.—26 ռ.:

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿՕՇԻԿՆԵՐ կանանց և մարդկերանց, հովանոցներ կանանց և մարդկերանց, ռուսական և անգլիական պողպատէ և երկաթէ զանակներ, յայտ-նի գործարաններից, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպէքներ 10 կ. և աւելի:

ԲԷՎԼՎԵՐՆԵՐ զանազան տեսակի 3 ռ. 50 կ.—35 ռ., պատրօններ ընդլիւր-ների համար, հրացան 6 ռ. և աւելի, զանազան վեշալիաներ, կշիռներ: Անգ-լիական և ամերիկական կլէճկա 50 կ.—2 ռ. արշիւն:

Մշտապէս ունեւ 10,000 ֆ. ԹԵՑ Պօպօլ եղբայրների, կաֆէ ՄԻՆԵԼՍՕՆԻ, թէյի համար խմորեղէն էյնիմի, ԲԵՑԳԱՐԻԻ սիգարներ, հոտաւէտ ջուր (Օլբ-կոյճն) ծխիոց փողիք, պուգրա, գրիցերիկի սապօն և այլն, աւելի էժան քան թէ ուրիշ տեղ:

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ գալանտերէյի զանազան ԱՊՐԱՆՔՆԵՐ, ծխախոտի արկղ, զրամարկ, քսակներ, սանդղներ, շապիկներ, լայկի ձեռնոցներ կանանց, զինուո-րական զանի ձեռնոցներ, գարուս, թելեր, բրձիկի և մարմարիօնի թանաքամա-ներ, միսրամաններ, գրիչներ, մոտիաներ, գրչակիթեր, սուրբուշ, փոստի թուղթ, ծրարներ և այլն:

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խցաններ (պրօբկա) հանքային ջրերի, գարջի, գի-նու և դեղատան ապրանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ:

ՎԵՐԵԼԻՉԻՄ ԲՈՐԵՐ առարկաները ունեւ մեծ քանակութեամբ և ստանում եմ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ և ՌՈՒՍԱՍՍԱՆԻ գործարաններից անմիջապէս:

Աւետարականներին գիշումն և առանձին պայմաններ:

Օտարաբաղաբայցիք կարող են դիմել. Тифлисъ. М. Н. ТЕРЪ-НИКОГОВОУ.

65—100